

# Խաղաղ հավաքների ազատության իրավունք

Տեղեկատվական թերթիկ լավագույն փորձի վերաբերյալ

Արդյո՞ք ես պետք է թույլտվություն ստանամ խաղաղ հավաք անցկացնելու համար

**Ոչ** Խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացումը հավաք անցկացնելու համար որևէ թույլտվություն ստանալ չի պահանջում (A/68/299, էջ 10, կետ 24): Առավելագույնը, լայնածավալ հավաքների կամ հասարակական կարգի բնականոն ընթացքի որոշակի խաթարում ենթադրող հավաքների պարագայում իշխանությունները կարող են պահանջել ծանուցում (A/HRC/23/39, էջ 15, կետ 52): Նման դեպքերում կազմակերպիչները պետք է կարողանան ամենապարզ և արագ եղանակով ծանուցել լիազոր մարմինն խաղաղ հավաքի անցկացման մասին՝ օրինակ, լրացնելով հստակ և հակիրճ ձևաթուղթ տվյալ երկրի հիմնական լեզվով (լեզուներով), ցանկալի է՝ առցանց փոստով առաքման հետ կապված հնարավոր անճշտություններից և ձգձգումներից խուսափելու համար (A/HRC/23/39, էջ 15, կետ 53): Այս գործընթացը պետք է լինի անվճար, և ծանուցումը ստանալուն պես՝ իշխանությունները պետք է արագ հաստատեն պատշաճ ծանուցման ստացումը (A/HRC/23/39, էջ 16, կետեր 57-58):

Արդյո՞ք ես էլ կարող եմ իրացնել խաղաղ հավաքի իրավունքը

**Այո** Կարևոր չէ, թե Դուք ով եք: Ըստ [Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի \(ՔՔԲՄԴ\)](#) 21-րդ հոդվածի՝ *յուրաքանչյուր ոք* ունի խաղաղ հավաքների ազատության իրավունք [Չաշնագրի](#) 2-րդ հոդվածով և Մարդու իրավունքների հարցերով խորհրդի թիվ [15/21](#), [21/16](#) և [24/5](#) բանաձևերով նախատեսված կարգով: Թիվ [24/5](#) բանաձևում Խորհուրդը հիշեցնում է մասնակից պետություններին՝ բոլոր անհատների խաղաղ հավաքներ անցկացնելու և միավորումներ կազմելու ազատության իրավունքը հարգելու և լիովին պաշտպանելու իրենց պարտավորության մասին, ինչպես առցանց, այնպես էլ համացանցի տիրույթից դուրս, այդ թվում՝ ընտրությունների համատեքստում, և փոքրամասնություն կազմող ուժերին աջակցող կամ այլախոհական հայացքները կամ համոզմունքները կիսող անձանց, իրավապաշտպանների, արհմիությունների անդամների և այլոց, այդ թվում՝ այդ իրավունքն իրացնող կամ պաշտպանող միգրանտների իրավունքը (A/HRC/26/29, էջ 9, կետ 22):

Արդյո՞ք պետությունը պարտավոր է խթանել խաղաղ հավաքների ազատության իրավունքը

**Այո** Պետության պոզիտիվ պարտականությունն է նպաստել ազատ հավաքների իրավունքի իրացմանը (A/HRC/20/27, էջ 8, կետ 27): Նշված պարտականությունը ներառում է՝ խաղաղ հավաքների մասնակիցների պաշտպանությունը այն անհատներից կամ խմբերից, այդ թվում՝ սադրիչներից և հակընդդեմ ցույցի մասնակիցներից, ովքեր նպատակ ունեն խափանել հավաքի անցկացումը կամ ցրել դրանք: Դրանցից են նաև՝ պետական վարչակազմի աշխատակիցները կամ նրանց անունից հանդես եկող անձինք (A/HRC/20/27, էջ 10, կետ 33):

Արդյո՞ք խաղաղ հավաքների ազատության իրավունքը կարելի է իրացնել առցանց:

**Այո** Պետությունները պարտավոր են հարգել և լիովին պաշտպանել ինչպես առցանց, այնպես էլ համացանցի տիրույթից դուրս անցկացվող հավաքների ազատության իրավունքը (ՄԻԲՆ թիվ [24/5](#) բանաձև): Համացանցը, մասնավորապես՝ հանրային լրատվամիջոցները, և այլ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները նշանակալի գործիքներ են հանդիսանում իրական կյանքում խաղաղ հավաքների անցկացումը կազմակերպելու համար: Մարդիկ իրավունք ունեն նաև հավաքներ կազմակերպել վիրտուալ տիրույթում, հավաքվել առցանց՝ այս կամ այն հարցի շուրջ իրենց կարծիքն արտահայտելու նպատակով (ՄԻԲՆ թիվ [21/16](#) բանաձև): Բոլոր պետությունները պետք է ապահովեն համացանցի մշտական հասանելիությունը, այդ թվում՝ քաղաքական հուզումների ժամանակ (A/HRC/17/27, կետ 79): Համացանցում տեղադրված որևէ նյութ արգելափակելու մասին ցանկացած որոշում պետք է կայացվի իրազեկ դատական մարմինը կամ մեկ այլ մարմին, որն անկախ է քաղաքական, տնտեսական կամ այլ չիմնավորված ազդեցությունից (A/HRC/20/27, էջեր 9-10, կետ 32):

Անսահմանափակ է արդյո՞ք խաղաղ հավաքների ազատության իրավունքը

**Ոչ** Խաղաղ հավաքների ազատության իրավունքը բացարձակ իրավունք չէ (ՔՔԲՄԴ, հոդված 4): Այն «կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, որոնքնախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ ազգային անվտանգության կամ հանրային ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանրային առողջապահության կամ բարոյական սկզբունքների պահպանման կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար» (ՄԻԲՆ [15/21](#) բանաձև, ԿԱ 4): Մակայն վերոնշյալ սահմանափակումները բացառություններ են, այլ ոչ թե օրինաչափություն: Հավաքների ազատության որևէ սահմանափակում չպետք է խախտի այդ իրավունքի էությունը, պետք է ամրագրված լինի օրենքով և պետք է լինի համաչափ և «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» (A/HRC/20/27, էջ 6, կետ 16): Որոշ սահմանափակումներ, օրինակ՝ առանց վերապահումների հավաքների անցկացման համատարած արգելքը, ըստ էության, անհամաչափ են և խտրական և պետք է հասցվի նվազագույնի՝ կիրառվելով համաչափության սկզբունքով միայն խիստ անհրաժեշտության դեպքերում (A/68/299, էջ 10, կետ 25): Հավաքի արգելքը պետք է կիրառվի միայն որպես ծայրահեղ միջոց: Սահմանափակումները պետք է այնուամենայնիվ թույլատրեն, որպեսզի ցույցերն անցկացվեն դրանց նպատակային լսարանին հասանելի տարածքում, այլ ոչ թե, օրինակ, տեղափոխվեն քաղաքի ծայրամասեր կամ այնպիսի տարածք, որտեղ դրանց ազդեցությունը կնվազեցվի (A/HRC/20/27, էջ 11, կետ 40):

Արդյո՞ք իշխանությունները պետք է հավաքների ժամանակ աջակցեն երրորդ կողմ ներկայացնող դիտորդների և լրագրողների աշխատանքին

**Այո** Իրավապաշտպաններին, լրագրողներին և դիտորդներին պետք է թույլատրել և խրախուսել ազատ գործունեի հավաքների ազատության իրավունքի համատեքստում՝ իրադարձությունների անկողմնակալ և անաչառ դիտարկման, այդ թվում՝ ցուցարարների և իրավապահ մարմինների վարքագծի փաստացի արձանագրումն ապահովելու նպատակով (A/HRC/20/27, էջ 13, կետ 48):



*Ի՞նչ է իրենից ներկայացնում հավաքը «Հավաքն» իրենից ներկայացնում է որևէ կոնկրետ նպատակով կանխամտածված ժամանակավոր գումարում մասնավոր կամ հանրային տարածքում: Այն ներառում է ցույցերը, փակ տարածքներում հանդիպումները, գործադուլները, երթերը, հանրահավաքները կամ նույնիսկ նստացույցները: Հավաքները կենսական նշանակություն ունեն բնակչությունը համախմբելու, դժգոհությունները և ձգտումները ձևակերպելու, իրադարձությունների նշումը խթանելու և ամենակարևորը՝ պետությունների պետական քաղաքականության վրա ազդելու համար (A/HRC/20/27, էջ 7, կետ 24):*

*Որո՞նք են միջազգային իրավունքով պաշտպանված հավաքների տեսակները*

*Մարդու իրավունքների միջազգային իրավունքով պաշտպանված են միայն խաղաղ հավաքները, այսինքն՝ այն հավաքները, որոնք բռնի գործողություններ չեն ենթադրում, և որոնց մասնակիցներն ունեն միմիայն խաղաղ մտադրություններ: Այնուամենայնիվ, հավաքների խաղաղ ընթացքն ակնկալվում է իշխանություններից (A/HRC/20/27, էջ 8, կետ 25):*

*Ինչո՞ւ է խաղաղ հավաքների ազատության իրավունքն այդքան կարևոր*

*Խաղաղ հավաքների ազատության իրավունքը մեզ վերապահված առավել նշանակալի մարդու իրավունքներից է: Միավորումներ կազմելու իրավունքի հետ մեկտեղ այս իրավունքն այն հիմնական իրավունքներից է, որոնց միջոցով ապահովվում է մարդկանց՝ միավորվելու և ընդհանուր հանրային բարիքին հասնելու ուղղությամբ աշխատելու կարողությունը: Նշված իրավունքը նաև միջոց է հանդիսանում քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական բազում այլ իրավունքներ իրացնելու համար (A/HRC/20/27, էջ 5, կետ 12): Խաղաղ հավաքների ազատության իրավունքը վճռորոշ դեր է կատարում նաև արդյունավետ ժողովրդավարական համակարգերի մշակման և գոյության գործում, որոնք հիմք են նախապատրաստում այնպիսի երկխոսության, բազմակարծության, հանդուրժողականության և ազատական հայացքների արտահայտման համար, որի պայմաններում հարգվում են փոքրամասնությունների կամ այլախոհների հայացքները և կարծիքները (A/HRC/20/27, էջ 20, կետ 84):*

# Խաղաղ հավաքների ազատության իրավունք

Տեղեկատվական թերթիկ լավագույն փորձի վերաբերյալ – էջ 2

## Թույլատրելի՞ են արդյոք ինքնաբուխ հավաքները



Ինքնաբուխ հավաքները պետք է ճանաչվեն օրենքով, և դրանց կազմակերպիչները պետք է ազատվեն նախնական ծանուցում ներկայացնելու պարտավորությունից (A/HRC/20/27, էջ 9, կետ 29): Ինչպես նախապես ծրագրված, այնպես էլ ինքնաբուխ հավաքների ժամանակ երթևեկության ազատ հոսքի վերաբերյալ մտահոգությունները չպետք է ինքնաբերաբար գերակայեն խաղաղ հավաքների ազատության նկատմամբ: Պետությունը պարտավոր է ծրագրեր կազմել և ընթացակարգեր սահմանել հավաքների ազատության իրավունքի իրացմանը նպաստելու համար, այդ թվում՝ փոխել հետիոտների և մեքենաների երթևեկությունը (A/HRC/20/27, էջ 9, կետ 41):

## Արդյո՞ք հավաքների կազմակերպիչները պատասխանատու են այլոց գործողությունների համար կամ պետք է որևէ գումար վճարեն հավաքի կազմակերպման համար



Հավաքների կազմակերպիչները որևէ ֆինանսական պարտավորություն չեն կրում հավաքների ժամանակ հանրային ծառայությունների մատուցման համար (օրինակ՝ հասարակական կարգի պահպանում, բժշկական ծառայություններ և առողջապահական և այլ անվտանգության միջոցներ) (A/HRC/20/27, էջ 9, կետ 31): Հավաքների կազմակերպիչները չպետք է պատասխանատվություն կրեն նաև այլոց ոչ իրավաչափ պահվածքի կամ պատասխանատու լինեն հասարակական կարգի պահպանման համար: Նմանապես, եթե անգամ կազմակերպիչները չտեղեկացնեն իշխանություններին կայանալիք հավաքի մասին, հավաքը չպետք է ցրվի միայն այդ պատճառով, իսկ կազմակերպիչները չպետք է ենթարկվեն քրեական կամ վարչական պատասխանատվության՝ տուգանքների կամ ազատազրկման տեսքով (A/HRC/20/27, էջ 9, կետ 29): Խրախուսվում է (թեև պարտադիր չէ) կազմակերպիչների կողմից օգնականների նշանակումը, ովքեր կօժանդակեն նրանց՝ հավաքի ընթացքում տեղեկացնելով և կողմնորոշելով հանրությանը: Հավաքի կազմակերպիչների օգնականները պետք է ունենան հստակ տարբերիչ նշաններ և չպետք է պատասխանատվության ենթարկվեն այլոց կողմից կատարված բռնության համար (A/HRC/20/27, էջ 9, կետ 31):

## Արդյո՞ք «հասարակական անվտանգության» մասին ընդհանուր մտահոգությունների դեպքում կարող է օրինական համարվել մահացու ուժի կիրառումը



Կյանքի իրավունքի խախտումը չի կարելի արդարացնել հասարակական անվտանգությունը պահպանելու պատրվակով (A/HRC/20/27, էջ 10, կետ 35): Հրազենի օգտագործումը ցույցերի ժամանակ թույլատրելի է միայն այն դեպքում, երբ առկա է մահվան կամ լուրջ վնասվածքի ուղղակի վտանգ (նույնը՝ վկայակոչելով A/HRC/17/28, կետ 60): Կյանքի իրավունքը (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդված և ԲԲԻՄԴ-ի 6-րդ հոդված) և խոշտանգումներից կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքը (Հռչակագրի 5-րդ հոդված և ԲԲԻՄԴ-ի 7-րդ հոդված) պետք է լինեն հավաքների ժամանակ հասարակական կարգի պահպանման առանցքային սկզբունքները: Մահացու ուժը պետք է կիրառվի միայն խիստ անխուսափելիության դեպքում, երբ ավելի նվազ ծայրահեղ միջոցները բավարար չեն կյանքի պաշտպանության նպատակն իրագործելու համար (տե՛ս Իրավապահների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնարար սկզբունքները, 12-14-րդ հոդվածներ):



Հիմնական միջազգային չափանիշներ

### Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, Հոդված 21.

«Խաղաղ հավաքների իրավունքը պետք է ճանաչվի: Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան, և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության, կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության»:

Տե՛ս նաև՝

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Հոդված 20
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, Հոդված 5(ix) [լուրբաբանչյուր ոք օրենքի առջև հավասարության սկզբունքով ունի հավաքների իրավունք՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, ազգային կամ էթնիկական պատկանելությունից]
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, Հոդված 15 [հավաքների իրավունքը հավասարապես կիրառելի է նաև երեխաների համար]
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, Հոդված 29 [հաշմանդամություն ունեցող անձինք ունեն այլ անձանց հավասար քաղաքական իրավունքներ]
- Իրավապաշտպանների մասին հռչակագիր (Մարդու համընդհանուր իրավունքները և հիմնարար ազատությունները խթանելու և պաշտպանելու նպատակով գործող անհատների, խմբերի և կազմակերպությունների իրավունքների և պարտավորությունների մասին հռչակագիր ), Հոդված 5

### Հիմնական տարածաշրջանային չափանիշներ՝

- Մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկյան խարտիա, Հոդված 11
- Երեխայի իրավունքների և բարեկեցության մասին Աֆրիկյան խարտիա, Հոդված 8 [հավաքների իրավունքը հավասարապես կիրառելի է նաև երեխաների համար]
- Մարդու իրավունքների և պարտականությունների մասին ամերիկյան հռչակագիր, Հոդված 21
- Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիա, Հոդված 15
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Հոդված 11
- Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա, Հոդված 12

## Արդյո՞ք բռնության դրսևորման եզակի դեպքը բավարար հիմք է բողոքի ցույցը դադարեցնելու համար



Պետք է ընդունվի հավաքի խաղաղ բնույթի կանխավարկածը (A/HRC/20/27, էջ 8, կետ 25): Բռնության դրսևորման եզակի դեպքերի կամ այլոց կողմից գործած այլ պատժելի արարքների արդյունքում անձանց՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքը չի դադարեցվում, եթե վերջիններս շարունակում են խաղաղ մտադրություններ կամ վարք դրսևորել (A/HRC/20/27, էջ 8, կետ 25): Բռնության դրսևորման եզակի դեպքերի պատճառով ամբողջ հավաքը չի կարող համարվել ոչ խաղաղ:

## Արդյո՞ք թույլատրվում է միաժամանակ անցկացնել մի քանի հավաքներ կամ հակընդդեմ ցույցեր



Նույն վայրում միաժամանակ մի քանի հավաքների անցկացման պարագայում հարկավոր է հնարավորության դեպքում թույլատրել, պաշտպանել և աջակցել բոլոր հավաքների անցկացմանը (A/HRC/20/27, էջ 9, կետ 30): Դա հատկապես կարևոր է հակընդդեմ ցույցերի պարագայում, որոնց նպատակն է այլ հավաքների ուղերձի նկատմամբ դժգոհության արտահայտումը: Նման ցույցերը պետք է տեղի ունենան, սակայն չպետք է տարհանոգեն այլ հավաքների մասնակիցներին՝ հրաժարվել իրենց խաղաղ հավաքների ազատության իրավունքն իրացնելուց:

## Արդյո՞ք իշխանությունները կարող են հատուկ սահմանափակումներ դնել հավաքների ազատության իրավունքի վրա ընտրական գործընթացների ժամանակ



Ընտրական գործընթացները ժողովրդավարական սկզբունքները հաստատելու և անգամ ամրապնդելու առանձնահատուկ մի ժամանակահատված են հանդիսանում ազգի կյանքի համար: Ընտրական գործընթացների ընթացքում պետությունները պետք է ավելի մեծ ջանքեր գործադրեն հավաքների ազատության իրավունքի իրացումը պաշտպանելու և խրախուսելու համար: Անհնար է հասնել իրական ընտրությունների անցկացման, եթե սահմանափակվի խաղաղ հավաքների ազատության իրավունքը (A/68/299, էջ 20, կետ 56): Պետությունները չպետք է ընտրությունների պատրվակով անհարկի սահմանափակեն խաղաղ հավաքների ազատության իրավունքը: Իրականում, հաշվի առնելով ընտրությունների համատեքստում խաղաղ հավաքների ազատության իրավունքի կարևորությունը՝ այնպիսի սահմանափակումներ, ինչպես օրինակ հավաքների համատարած անվերապահ արգելքը, կիրառելու շեմը պետք է ավելի բարձր լինի, քան սովորական պայմաններում (A/68/299, էջ 10, կետ 25):

## Արդյո՞ք ես ունեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, եթե խախտվել է հավաքների ազատության իմ իրավունքը



Պետությունները պարտավոր են մշակել բողոքների ներկայացման հասանելի և արդյունավետ մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլինի անկախ, արագ և մանրակրկիտ կերպով հետաքննել մարդու իրավունքների խախտումների կամ չարաշահումների, այդ թվում՝ հավաքների իրավունքի խախտման մասին դիմումները (A/HRC/20/27, էջ 19, կետ 77): Խաղաղ հավաքների ազատության իրավունքի անհարկի սահմանափակումների դեպքերում տուժողը (տուժողները) պետք է վնասի փոխհատուցում և արդար ու համաչափ փոխհատուցում ստանալու իրավունք ունենան (A/HRC/20/27, էջ 19, կետ 81): Օրենքով պետք է ամրագրվեն նաև խաղաղ հավաքների անցկացմանը խոչընդոտելու կամ դրանք բռնությամբ կիրառմամբ ցրելու համար նախատեսված քրեական և կարգապահական պատժամիջոցները (A/HRC/20/27, էջ 19, կետ 78):